

№624* Ե. ՍԵՏՈՆ - ՏՈՄՊՍՈՆ

ԱՐԵՆԻ



ՊԵՏՆՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ


02 MAR 2016
807

Ե. ՍԵՏՈՆ ՏՈՄՊՍՈՆ

134 133

ԱՐՆՈ

Թարգմ. ռուսերենից Յե. Թ.



ՊՐԱՊԱՍՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴՊԵՏԱՐԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴՊԵՏԱՐԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴՊԵՏԱՐԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴՊԵՏԱՐԱՏ

Հրատ. № 1780
Գրավ. № 6699 (բ) Պատ. 4269 Տիրույթ 4000

Պետական տպարան, Երևան



11-30849 90

Ա Ր Ն Ո

Ամերիկայի Նյու-Յորկ քաղաքում, մի մեծ ախոռատան տանիքի տակ կար մի աղափնաբուն, վորտեղ պահում և վարժեցնում էին նամակատար աղափնիներ։ Մի օր մրցում պիտի լինեք հիսուն պատանի աղափնիների։ Նրանց մի քանի անգամ թողել էին թռչն իրանց ծնողների հետ, բայց տուն էլին վերադարձել նրանք իրանք իրանց, առանց ծնողների։ Իսկ այժմ առաջին անգամ տուն պիտի վերադառնային նրանք հեռու տեղից, մի ուրիշ քաղաքից։

Նամակատար աղափնիներ պահելիս մարդիկ չեն աշխատում աղափնիների մի նոր ու գեղեցիկ տեսակ ստանալ, այլ ուզում են միայն խելոք և ուժեղ թևերով թռչուններ ունենալ։ Նամակատար աղափնիները պետք է սերտ կապված լինեն իրենց բնի հետ և ուր ել վոր լինեն, առանց սխալվելու կարողանան գտնել նրան։ Յեվ դժվար է գտնել մի ուրիշ կենդանի, վոր այնպես լավ գտնի գնալիք ճամբի ուղղութիւնը անծանոթ տեղերով անցնելիս, ինչպես այդ անուն է նամակատար աղափնի։

Հետաքրքիր մրցումը տեսնելու համար հավաքվել էին մի քանի հոգի՝ աղափնաբնի տիրոջ մոտիկ հարևաններն ու ծանոթները։ Նրանցից մեկին ընտրեցին դատավոր, վոր պիտի վճռեր, աղափնյակներից վորը առաջինը մտավ բունը։

Տանիքի պատի վրա լեղած բոլոր լուսամուտները փա-

կեցին բացի մեկից, այդ մեկն ել դատավորը իսկույն պիտի փակեր, հենց վոր ներս թռչեր աղաթխաներից մեկն ու մեկը, վորը և պիտի համարվեր հաղթանակը տանող:

Գիտելին, վոր աղաթխները ճանապարհ պիտի ընկնեն ցերեկվա ժամի տասներկուսին, իսկ տուն պիտի հասնեն տասներկու և կեսին:

Բոլորը տեղ ելին բռնել տանիքի պատի յերկարությամբ և մի քանիսը պատի ճեղքերից, վոմանք ել լուսամուտների արանքից նայում ելին դեպի այն կողմը, վորտեղից պիտի գային աղաթխները: Հանկարծ նրանցից մեկը գոչեց՝

— Գալիս են, գալիս են:

Հիրավի տանիքներից վոչ բարձր յերևաց սպիտակ ամպի պես շարժվող մի բան, վոր արագությամբ անցավ մի քանի բարձր ծխնելույղների մոտով, և հազիվ յերկու վարկյան անցած, աղաթխները հասան տուն: Նրանց վերադարձը այն աստիճան անակրնկալ եր, նրանց սպիտակ թևերի փալլը արեգակի շողքերի տակ այնպես շլացուցիչ, իսկ թռիչքի ձայնը այնպես ուժեղ, վոր միակ բաց պատուհանի մոտ կանգնած դատավորը քիչ մնաց իրեն կորցնել և հազիվ ժամանակ գտավ լուսամուտը ծածկելու, հենց վոր կապտին տվող մի բան ներս ալացավ, խփելով նրան իր թևերով:

— Արնոն ե, իմ սիրելի Արնոն, — լսվեց աղաթխների տիրոջ ուրախալի ձայնը: — Յեսասում եյի, վոր նա առաջինը կգա: Նա յերեք ամսական հազիվ լինի, բայց տեսնում եք, հաղթողը նա դուրս չեկավ մրցման մեջ:

Բոլորը կռացած նայում ելին Արնուին, թե ինչպես նա առաջ մի քիչ շուր խմեց, հետո սկսեց ուտել առաջուց պատրաստված կերը:

— Մի տեսեք ինչ աչքեր ունի, ինչ թևեր: Ասացեք

այդպիսի կուրծք սկի տեսած կմք, հիացած ասում եր տերը:

Փա Արնուի առաջին թռիչքն եր: Իսկապես վոր նա ամենալավ աղաթխներ ալդ աղաթխների մեջ, վոր հռչակ-



ված եր իր աղափնիներով, և նրա ապագան անշուշտ շատ փալուսն պիտի լիներ: Նրա վոտի վրա անց կացրին արծաթե ողակ, վորի վրա կար նրա համարը: Այդպիսի ողակներ անց ելին կացնում բոլոր նամակատար աղափնիների վոտներին: Ողակի վրա փորագրված եր Արնոյի համարը՝ 2590:

Այս անգամ հեռուն մրցող աղափնիներից տուն վերադարձան միայն քառասունը, թույլերը չեա են մնում չե բամակից, մի քանիսն ել թռչում, գնում են ուրիշ տեղեր: Մրցումների շնորհիվ աղափնիներ պահոդները կարողանում են շոկել ուժեղներին ու տոկուններին, վորոնք կարող կլինեն լավ կատարել իրանցից պահանջված գործը:

Տասը հետ մնացած աղափնիներից հինգը կորան անհետք, իսկ մնացած հինգը վերադարձան նույն ուրը, բայց վոչ միաժամանակ, այլ կամաց կամաց, մեկը մյուսի հետից:

Առաջին թռիչքից հետո պատանի աղափնիներին շարունակեցին վարժեցնել սովորական կարգով: Այն տարածութունը, վոր նրանք պիտի թռչելին, ամեն անգամ ավելացնում ելին հիսուն մետրով, իսկ թռիչքի ուղղութունը արնքան փոփոխեցին, մինչև վոր աղափնիները ճանաչեցին Նյու-Յորկի բոլոր շրջակայքը, վոր մոտ լերկու հարյուր կիլոմետր շրջագիծ ունեւ: Գնալով աղափնիների թիվը պակասեց, վերջը հիսուն աղափնաց մնաց միայն քսանը: Դրա պատճառն այն ե, վոր հեռավոր թռիչքներ կատարելիս հետ են մնում վոչ միայն թույլերը կամ վատ կազմվածք ունեցողները, այլ և ճանապարհին պատահաբար վնասվածները կամ թռիչքից առաջ շատ կուշտ կերածները:

Այդ լերամակում շատ կա լին ընտիր աղափնիներ՝ լայն կրծքով, սուր աչքերով և ուժեղ թևերով, վորոնք կարծես

գիտամբ ստեղծված լինելին հեռավոր ու սրընթաց թռիչքներ կատարելու և դժվար ընթացքներին մարդկանց կարևոր ծառայութուն մատուցելու համար: Նրանց բոլորի փետուրները կապտագույն ելին, սալտակ կամ դարչնագույն, ուրիշ բանով նրանք աչքի չեյին ընկնում բացի փալուսն աչքերից, մեկ ել չուրահատուկ ուռուցքներից ականջափոսերի վերևում, վոր ունենում են միայն բոլոր գտարյուն նամակատար աղափնիները:

Ամենից ազնվացեղը և արագաթռիչը բոլորի մեջ Արնոն եր: Աղափնաբնում նա առանձնապես վոչնչով չեր գանազանվում մյուս աղափնիներից, մանվանդ վոր շուտով բոլոր քսան աղափնիների վոտներին անց կացրին միանրման արծաթե ողակներ, միայն թռչելիս եր ցուց տալիս Արնոն իր առանձին շնորքը: Յերբ աղափնաբնի պատահանները բացվում ելին և լսվում եր «հառաջ» բացականչութունը, Արնոն առաջինն եր անհետանում լերկնային տարածության մեջ, թռչում եր առանց մի վարկյան կանգ առնելու և ամենքից շուտ եր գտնում տան ճանապարհը:

Կես տարի չանցած Արնոն արժանացավ «Նամակատար աղափնիներ պահող ընկերության» առաջին պարգևին:

Ամենադժվարը նամակատար աղափնիների համար ծովերի վրայով թռչելն ե, ուր չկա վոչ մի ուղեցույց նշան: Ավելի ևս դժվար ե լինում թռչելը մառախուղի ժամանակ, լերբ արեգակն անգամ չի յերևում նրա թանձր շրջադարձի հետևից: Բայց լերբ նամակատար աղափնու հիշողութունը, տեսողութունը և լսողութունը անգոր են լինում նրան ծառայութուն մատուցանելու, այն ժամանակ մնում ե նրա մեջ մի հատկութուն, վոր նամակատար աղափնու ամենամեծ ուժն ե՝ այդ նրա ներքին

բնագրին ե, վոր միշտ ցուց ե տալիս նրան այն ուղղու-
թյունը, վորով նա պիտի թռչի տուն գնալու համար:

Մի որ Արնոյի յերկու ուրիշ աղափնիների հետ տե-
ղավորեցին մի մեծ ովկիանական նավում, վոր պիտի մեկ-
ներ Ամերիկայից Անգլիա: Վճռել էին աղափնիներին բաց
թողնել, յերբ ափը աչքից բոլորովին կանհետանա:

Բայց շատ չանցած, ովկիանոսը պատեց թանձր մա-
ռախուղ, ուստի աղափնիներին թողին նավում, մինչև հան-
դիպեցին մի ուրիշ՝ Նյու-Յորկ ուղեվորովող նավի, վոր ա-
ղափնիներին վերադարձնի իրանց տեղը:

Բայց տասը ժամվա չափ ճանապարհ կտրելուց հետո
նավում մեծ դժբախտություն պատահեց՝ փչացավ շոգե-
մեքենան: Շոգենավը այս ու այն կողմն եր ընկնում
թանձր մառախուղի մեջ ինչպես մի կտոր տաշեղ: Նա
միայն աղիողորմ սուլոցներով ոգնություն եր կանչում,
բայց ոգնություն վոչ մի տեղից չեր գալիս:

Խորտակվելուն մոտ նավում տիրող իրարանցման և
սարսափի ժամանակ հանկարծ մեկը հիշեց նավում յեղած
յերեք պատահական ճամբորդների՝ յերեք աղափնիների
մասին: Ընտրեցին նրանցից մեկին, վոր կրում եր 2592
համարը, կապեցին նրա պոչի տակը գլանաձև կոլորած
նամակ, վոր ամփոփված եր ջուր չծծող կտորի մեջ: Յերբ
ամեն բան պատրաստ եր, աղափնուն բաց թողեցին և նա
անհետացավ մառախուղի մեջ:

Կես ժամից հետո թողեցին յերկրորդ աղափնուն: Նա
մի քիչ թռչելուց հետո վերադարձավ նոտեց նավի պա-
րանների վրա: Այդ աղափնուն տեսնողը կասեր, վոր նա
սարսափի կատարյալ մարմնացումն ե, թվում եր, վոր վո-
չինչ աշխարհում չեր կարող ստիպել նրան, վոր մեկ եր
թռչի ալեկոծվող ու մոլեգնած ովկիանոսի վրայով: Նրան
առանց դժվարության բռնեցին և գցեցին նավի նկուղը:

Ամենից վերջը դուրս բերեցին յերրորդ աղափնուն,
վոր մի փոքրիկ ու նվաղ թռչուն եր: Ծովագնացները վո-
չինչ չգիտեցին Արնոյի մասին, միայն տեսան, վոր նրա
ողակի վրա գրված ե՝ «Արնո, № 2590»: Պարզ ե, վոր
այդ մակագիրը նրանց վոչինչ չեր կարող ասել: Միայն
այն նավաստին, վոր նրան ձեռքին բռնած ուներ, նկա-
տեց, վոր այս աղափնու սիրտն այնպես ուժգին չեր բաբա-
խում, ինչպես առաջին յերկուսին:

Արնոյի պոչի տակին կապած նամակում գրված եր՝

«Առավոտյան ժամի տասը: Հինգշաբթի: Նավի մեքե-
նան կտրվեց Նյու-Յորքից յերեք հարյուր հիսուն կիլո-
մոր հեռավորության վրա: Միանգամայն անոգնական ենք
մառախուղի մեջ: Վորքան կարելի յե շուտ մի նավ ու-
ղարկեք, վոր մեզ այստեղից հանի: Ամեն բոպե յերկու
անգամ սուլում ենք, մինը կարճ, մյուսը յերկար: «Նա-
վապետ»:

Այս թուղթը, վոր գրված եր Նյու-Յորկ շոգենավա-
յին ընկերության հասցեյով, նույնպես գլանաձև կոլորեցին,
ամփոփեցին ջուր չծծող կտորի մեջ, կապեցին Արնոյի
պոչի մեջ տեղում, վորից հետո նրան ազատ թողեցին:

Զգալով իրեն ոգի մեջ, Արնոն շոգենավի շուրջը մի
շրջան կազմեց, հետո յերկրորդը, յերրորդը, և այսպես մի-
մյանց հետևից շրջաններ կատարելով, նա շարունակ վեր
բարձրացավ, մինչև բոլորովին կորավ ամպերի մեջ: Այդ-
տեղ վոչ տեսողությունը, վոչ ել լսողությունը չեցին կա-
րող նրան վոչ մի ծառայություն մատուցանել և նա լի-
ովին ապավինեց այն ներքին բնագրին, վոր նրա մեջ ան-
չափ զորեղ եր և վորը յերկուրդից անգամ մի մազաչափ
չթուլացավ: Ղեկավարվելով այդ բնագրով, նա անշեղ թռ-
չում եր դեպի իր մայրենի աղափնաբունը, վորտեղ նա

Դույս աշխարհ եր տեսել և վորտեղ միայն ամբողջ աշխարհում նա գտնում եր իրան ինչպես տանը:

Այդ նույն ուրը Արնոյի տերը՝ Բիլլին ինչ վոր գործ եր անում աղավաբնում, յերբ նրա աղանջին դիպավ աբազ շարժվող թևերի ձայն: Նա հետ նայեց տեսավ, ինչպես մի կապտավուն աղավաբակ նետի պես ներս սլացավ լուսամուտից և անմիջապես վրա պրծավ ջրի վրա: Բիլլի աչքովն ընկավ, թե ինչպիսի ագահությամբ նա շուր ե խմում և հանկարծ աղաղակեց՝

— Տո սա իմ սիրունիկ Արնոն ե յեղել:

Ըստ սովորության նա առաջ մի ժամացույցին նայեց ու տեսավ, Վոր ժամի յերկուսից անց ե 40 րոպե: Հետո մեկ ել նայեց Արնոյին ու նկատեց, նրա պոչի վրա փաթաթված թելը: Այդ վոր տեսավ, նա շտապով ծածկեց դուռն սև պատուհանը և ցանցը գցեց Արնոյի վրա:

Մի րոպե չանցած նամակը նրա ձեռքումն եր:

Հասցեն կարդաց թե չե, նա վազեցավ դուռս լեկավ փողոց և մի քանի րոպեյում հասավ շոգենավային ընկերության գրասենյակը: Այնտեղ նա իմացավ, վոր Արնոն թռել ե ովկիանոսի վրայով ու թանձր մառախուղի միջով յերեքհարյուր հիսուն կիլոմետր 4 ժամ 40 րոպեյում: Յես մի ժամ հազիվ անցած անհրաժեշտ ոգնութունը արդեն ուղարկված եր խորտակվող նավը փրկելու համար:

Թռչել յերեքհարյուր հիսուն կիլոմետր ովկիանոսի վրայով 4 ժամ 40 րոպեյում, դա իսկապես վոր մի փառավոր գործ եր, վոր շուտով արձանագրվեց «նամակատար աղափնիներ պահող ընկերության» մատյանում:

Ընդունված սովորության համաձայն այդ ընկերության քարտուղարը ինքն իր ձեռքով գրեց չջնջվող թանաքով Արնոյի կատարած քաջագործութունը նրա աջ թևի ամենամեծ փետուրի վրա:

Նավից թողած յերկրորդ աղափնին անհետք կորավ: Հավանորեն նա ընկել եր ովկիանոսի մեջ:

Այսպես եր Արնոյի կատարած առաջին քաջագործութունը, վորին շուտով հետևեցին և շատ ուրիշները:

Շատ չանցած նշանակվեց նամակատար աղափնիների մի նոր մրցում, նրանք պիտի թռչեին իննսուն մղոն՝ Չիկագո քաղաքից Նյու-Յորկ:

Արնոն գրված եր մրցողների թվում նշանակված ուրից վեց ամիս առաջ և շատերը համոզված եին վոր հաղթողը դարձյալ նա կլինի:

Աղափնիներին Չիկագո ուղարկեցին յերկաթուղով: Նրանց աջատեղ ազատ արձակեցին հերթով, մեկը մյուսի հետևից, և ամենից վերջը արձակեցին Արնոյին: Արձակված աղափնիները մի յերամակ կազմեցին և նրանց շարանը բռնեց Նյու-Յորկի ուղղութունը: Յերբ նամակատար աղափնի թռչում ե ծանոթ տեղերով, նա առաջնորդվում ե այն առարկաներով, վոր առաջուց տպավորված են լեզել նրա հիշողության մեջ: Այդպես ել թռչում եր Արնոն, վոր 12 ժամում անցավ հազար կիլոմետր տարածութուն և առաջ տվեց ամբողջ յերամակին: Յերբ նա հասել եր իրեն ծանոթ մի փոքրիկ քաղաքի, սաստիկ ծարավ դգաց:

Քաղաքի տանիքների վրայով դանդաղ թռչելիս Արնոն իր սրտես աչքերով նկատեց ներքմում մի ոտար աղափնաբուն:

Նա մի քանի լայն շրջաններ կատարելով ցած իջավ և աղափնիների մի ամբողջ յերամակի հետ ներս մտավ աղափնաբունը: Ներս մտնելուն պես նա արագությամբ ազգեց դեպի շուրը և սկսեց ագահությամբ խմել: Առավագեց դեպի շուրը և սկսեց ագահությամբ խմել: Առաջին անգամը չեր, վոր նա կանգ եր առնում ճանապարհի

հին՝ ոտար աղափնաբներում: Սովորաբար լուրաքանչյուր աղափնաբույժ ուրախությամբ ապաստան է տալիս լեկվոր աղափններին:

Աղափնաբնի տերը խսկույն նկատեց, վոր իր աղավ-նիների մեջ կա մի ոտար աղափնի և մոտեցավ նրան ա-վելի լավ դիտելու համար:

Աղափնիներից մեկը ցանկութիւնն ունեցավ Արնոյի հետ կովի բռնվելու, բայց Արնոն խուսա տվեց և մի կողմ թռավ: Այդ ժամանակ տիրոջ աչքովն ընկավ, վոր Արնոյի թևերի վրա բան կա գրված: Այդ վոր տեսավ, տերը փա-կեց աղափնաբնի լուսամուտը և Արնոն նրա ձեռքը գերի ընկավ:

Տերը բաց արեց Արնոյի թևերը և կարդաց այն բո-լորը, ինչ վոր կար գրված նրա փետուրների վրա: Հետո նրա աչքովն ընկավ արծաթե ողակը, վորի վրա գրված էր նրա անունը:

— Ուրեմն դու Արնոն ես յեղել,— գոչեց նա:— Շատ շատ բան եմ լսել քո մասին, իմ սիրունիկ թռչնակ: Ինչ-պես բախտս բանեց, վոր դու իմ ձեռքս ընկար:

Նա արձակեց Արնոյի պոչին կապած նամակը և կար-դաց՝ «Արնոն թռավ Չիկագոյից այսօր առավոտյան ժամի 4-ին, մասնակցում է աղափնիների մրցմանը Չիկագոյից Նյու-Յորք»:


— Ուրեմն սա անցել է հազար կիլոմետրը տասներ-կու ժամում: Այ, այսպես թռչուն կլինի, լես իմ հոգին,— գոչեց տերը և մեծ զգուշությամբ, համարյա մի տեսակ ակնածանքով Արնոյին դրեց վանդակի մեջ:— Գիտեմ խա-թրով դու ինձ մոտ մնացողը չես,— ավելացրեց նա,— իսկ վանդակում պահելով չես գոնե սերունդ կունենամ քե-զանից:

Ահա այսպես Արնոն մնաց փակված մի մեծ ու հար-

մար վանդակում: Նրա նոր տերը վոչինչ չխնայեց, վոր իր մոտ գերի ընկած աղափնու կյանքը լինի հանգիստ ու հարմար:


Սկզբի որերում խեղճ աղափնուկի բան ու գործը այն էր միայն, վոր առավոտից մինչև գիշեր բարձր ու ցածր էր անում վանդակի մաֆթուկների վրայով, վոր մի ճար գտնի աղատվելու: Բայց մի յերեք ամիս անցնելուց հետո նա կարծես մի քիչ հանգստացավ և այն ժամանակ գցեց Արնոյի վանդակի մեջ մի աղափնուկ, վոր նրա հա-մար ընկերուհի լինի: Բայց Արնոն սկի չել մտիկ չարեց նրա վրա: Քիչ հետո տերն այդ աղափնուն վերցրեց և մի

ուրիշը գրեց նրա տեղը: Բայց Արնոն դրա վրա չել ու-շադրութիւնն չդար-ձրեց: Նա չէր ու-զում բուն դեմք գե-րության մեջ: Այդ-պես տեկեց մի ամ-բողջ տարի. ինչ ըն-կերուհի չել վոր դնում էին Արնոյի մոտ, նա կամ կատա-ղաբար հարձակվում էր նրանց վրա, կամ կատարյալ ան-



տարբեր վերաբերմունք երցույց տալիս: Մեկ-մեկ ազատ լինելու տենչը այնպիսի արագությամբ էր բու-կում նրա մեջ, վոր նա գժի պես իրան լերկաթե վանդակի պատե-րով էր տալիս, կամ, ինչքան ուժը կար, խփում էր կրծքով նրա լերկաթե մաֆթուկներին:

Յերբ վոր գրոտած փետուրները սկսեցին թափել նրա թևերից (փետուրները ամեն տարի թափվում են), տերը խնամքով հավաքում էր նրանց, կարծես մի թանգազին



բան լինելին, և նույնությամբ գրում էր այն, ինչ վոր կար գրված նախկին փետուրների վրա:

Այդպես անցան յերկու յերկարածիգ տարիներ: Տերը Արնոյի տեղը փոխեց ու դրեց մի նոր վանդակի մեջ և դարձյալ դրեց նրա մոտ մի նոր ընկերուհի: Այս անգամ Արնոն ավելի բարյացակամ վերաբերմունք ցույց տվեց դեպի նա, և շատ չանցած տերը համոզվեց, վոր զուգը բուն շինելու պատրաստութուններ է տեսնում ապագա ձագուկների համար:

Տերը այժմ հավատացած էր, վոր Արնոն աղափառնից ալևս վոչ մի տեղ չի գնա և առաջին անգամ վանդակի դուռը բաց թողեց: Յեվ ահա Արնոն նորից ազատ էր:

Կանգ առավ արդյոք նա տարակուսած կամ մնաց արդյոք նա շիվարած: Ամենևին վոչ և վոչ մի վարկյան: Հենց վոր վանդակի դուռը բացվեց նրա առաջ, նա կաշճակի արակությամբ դուրս պրծավ վանդակից, թափահարեց հուժկու թևերը, դուրս թռավ ատելի բանտից աղափառնի բաց լուսամուտի միջով և սլացավ դեպի հեռունները:

— Դեպի տուն, դեպի հայրենի տունը: Արնոն բարձրանում էր միշտ դեպի վեր, դեպի յերկինք, կատարելով միմյանց հետևից ավելի ու ավելի մեծ շրջաններ և նետի նման սլանալով կապույտ լեթերքում: Բարձունքում նշմարվող նրա թևերը սպիտակին ելին տալիս և արևի ճառագայթների տակ կարծես կրակի ցլեր ելին:

Ներքևում հովտում ընթանում էր մի ճեպընթաց գնացք, վոր շատ առաջ էր իրանից, բայց Արնոն առաջ տվեց նրան և սլանում էր սարերում հովիտների ու բլուրների վրայով, վորոնց վրայի չամիների կատարները մեղմ որորվում էին հողմից:

Հանկարծ դուրս թռավ իր բնից, մի հին կաղնու-
փշակի միջից մի ուրուր և սավառնում եր ողում:

Նա հեռվից նկատել եր աղափնուն և նրան արդեն իր
վորսն եր համարում: Արնոն չթեքվեց վոչ դեպի աջ, վոչ
դեպի ձախ. մի թզաշափ անգամ վոչ ցածրացավ, վոչ ել
բարձրացավ, վոչ մի վարկյան չգանդաղեցրեց իր թռիչքը:
Ուրուրը պտույտներ եր անում, սպասելով իր վորսի մո-
տենալուն, բայց Արնոն սլացավ նրա մոտով, ինչպես յեր-
բեմն դարան մտած արջի մոտով սլանում, անցնում ե ա-
րագավազ յեղջերուն:

Տո՛ւն, դեպի տուն, այս եր միակ ձգտումը:

Նա թռչում եր այժմ իրան լավ ծանոթ ճանապար-
հով: Մի ժամից հետո նա հասել եր արդեն իրեն հարա-
զատ բլուրներին, իսկ մյուս ժամին թողել եր նրանց ի-
րեն հետևում: Վաղուց ծանոթ վայրերի տեսարանը կար-
ծես նոր ուժ եր տալիս նրա թևերին, նրա սրատես աչքերը
վաղուց արդեն նշմարում եյին Նյու-Յորկի շրջակայքը:

Արնոն թռչում եր մի բլուրի վրայով, յերբ հանկարծ
բլուրի մյուս կողմից յերևաց մի բազե, վոր ամենաճար-
պիկն ե գիշատիչ թռչունների մեջ: Վստահ իր ուժի և
թևերի վրա և ախորժակը սրած սպասում եր նա իր վոր-
սին: Շատ ու շատ աղափնիներ եր բռնել նա ու տարել
իր բունը, այն ել առանց շտապելու և իր ուժերը իզուր
տեղ վատնելու մոտենում եր իր նոր վորսին, վոր պա-
տեհ ըոպեյին հարձակվի նրա վրա: Բայց Արնոն վոչ մի
կողմ չթեքվեց և ուղիղ շարունակեց իր ճանապարհը:

Տո՛ւն, դեպի տուն:

Նա միայն արագացրեց իր թռիչքը: Բազեն վերից
վար հարձակում գործեց նրա վրա, բայց նրա աչքերի ա-
ռաջ կապտին տվեց միայն մի բան և աներևութացավ...
Արնոն սլանում եր հովտի վրայով պարսոտից ար-

ձակած բարի պես: Յերկու տարի կլինեք, ինչ նա չեր
տեսել Հուդսոն գետի հովիտը: Նա բավական ցածրացավ
ձեպի գետը, վորի ալիքները փրփրափալել եյին հյուսիսա-
յին քամուց:

— Տո՛ւն, տո՛ւն. դեպի տուն: Նա անցավ Պուկիպսի
քաղաքի վրայով և նորից թռչում եր գետի յերկարու-
թյամբ, բոլորովին մոտ դեմնին, վորովհետև հանկարծակի
բարձրացած քամին խանգարում եր թռչել նրան բարձ-
րերում: Արնոն կարծես մոռացել եր այն փորձանքները,
վոր կարող են գալ իր գլխին գետնին շատ մոտ թռչելիս:
Մերձավորյա բլրի վրա յերևաց մի վորսորդ՝ հրացանով զին
ված: Հավեց հրացանի տրաքոցը և Արնոն մահացու վերք
ստացավ կրծքում:

Բայց այդ չկտրեց նրա հույսը: Սպիտակ փետուրներ
սև գրերով ընկան գետնի վրա: Սլո փետուրների վրա
գրված եր նրա քաջագործության մասին ծովի վրա: Սև
բիծ յերևաց նրա կրծքին: Բայց Արնոն ձգտում եր դեպի
տուն և մի ակընթարթում թողեց հեռու իր հետևում վր-
տանգավոր մարդուն: — Տո՛ւն, դեպի տուն:

Այժմ նա թռչում եր վոչ այնպես արագ, ինչպես ա-
ռաջ: Քամին մի տեսակ տարրինակ աղմուկ եր առաջա-
ցնում նրա փետրահան թևերում, իսկ ցավը կրծքում զդա-
ցնել եր տալիս նրա ուժերի շլատման մասին: Բայց նա
անդադար թռչում եր դեպի առաջ:

Նրա սրատես աչքերն արդեն պարզ նշմարում եյին
քաղաքի բարձրաբերձ աշտարակները, յերբ նա թռավ գե-
տի վրա բարձրացող որածայր ժալոների վրայով: Նրա թե-
վերը թռչացել եյին, աչքերի փայլը կորել, բայց տուն
գնալու ձգտումը աճում եր նրան մեջ անդիմադրելի ու-
ժով:

Նա սլացավ ծեղծեգող ջրի վրայով, ծառերի կատար-
ների ծայրերով և վերջապես մոտեցավ այն տեղին, ուր

ժայռերի մեջ բազեների մի բուն կար: Բազեները հեռվից նկատել ելին դեպի իրենց թռչող աղափուն: Արնոն ել նրանց մասին գիտեր վաղուց: Նամակատար աղափուններին հանձնված շատ նամակներ կային ընկած ալդ բնում, շատ գրոտած փետուրներ ելին ընկել ժայռի անմատչելի գագաթից: Բայց Արնոն շատ անգամ եր թռել անցել ալդ բնի կողքով՝ ալթմս ել ինչպես և առաջ, մոտենում եր նրան առանց տատանվելու: Բայց ալթմ նա առաջվանը չեր՝ թշնամու հրացանը ջլատել եր նրա ուժերը և դանդաղացել նրա թռիչքի արագությունը:

Յեվ ահա լերկու բազե լերկու արձակված նետերի պես ընկան նրա հետևից, լերկու ուժեղ և արագաթռիչ գիշատիչներ մի խեղճ և ուժասպառ աղափուն հետևից:

Մի ակնթարթում ամեն բան վերջացավ: Բազեները հաղթական ճիչ արձակելով վերադարձան իրենց բունը և իրենց հետ բերած վորսը անվախ ու համարձակ Արնոյի փոքրիկ մարմինն եր:

Արնոյի աննման թևերը իրենց վրայի գրեթե, վորոնց ալթմս ալլես կարգացող չկար, ընկած ելին ժայռի վրա հոշոտված: Թափթփված ելին նրանք աչնտեղ աճրևի և արևի ճառագավորների տակ, և ալդպես թափթփված մնացին աչնտեղ աչնքան ժամանակ, մինչև բնի տերերին՝ բազեներին վոչնչացրին, բունն ել բոլորովին քարուքանդ արեցին:

Յեվ յերկար ժամանակ վոչ վոր չգիտեր, թե ինչ յեղավ ալդ հրաշալի աղափուն, մինչև վոր աչն անձը, վոր ավերեց բազեների բունը, գտավ բնի փոշու և աղբի մեջ նամակատար աղափուն մի ողակ, վորի վրա գրված ելին այս խոսքերը՝

«Արնո, № 2590»:



50

ՀՀ Ազգային գրադարան



NL0999884

АНЛД 25407

11

30249

Э. СЕТОН-ТОМПСОН

АРНО

ГИЗ. ССРА ЭРИВАНЬ
1931